ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

02.09.2014թ.
223-ի 4

ՀՀ գլխավոր հարկադիր կատարող
պարոն Միհրան Պողոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պողոսյան,

Սույն թվականի օգոստոսի 30-ին HSBC բանկի աշխատակցի հեռախոսային զանգից իմացել եմ, որ բանկում իմ հաշվեհամարի վրա 10.000 ՀՀ դրամի չափով արգելանք է դրված՝ հարկադիր կատարման ծառայության գրության հիման վրա: Ես ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից կատարողական վարույթ հարուցելու մասին որեւէ որոշում եւ առհասարակ որեւէ գրություն չեմ ստացել: Նմանապես, ՀՀ ՃՈ-ից ինձ վարչական տույժի ենթարկելու մասին որեւէ որոշում չեմ ստացել:

“Դատական ակտերի հարկադիր կատարման մասին” ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ “Կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում…”: Նույն հոդվածի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ “Հարկադիր կատարողի որոշման պատճենը, ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ ***եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին…”:***

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ինչպե՞ս է արգելանք դրվել իմ բանկային հաշվի վրա, եթե ես որեւէ կերպ երբեւէ չեմ ծանուցվել կատարողական վարույթ հարուցելու մասին:
2. Առաջնորդվելով “Դատական ակտերի հարկադիր կատարման մասին” ՀՀ օրենքի 28-րդ եւ 30-րդ հոդվածներով՝ խնդրում եմ տրամադրել իմ նկատմամբ կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը: Իմ անձնագրային տվյալներն են՝ AK 0467924, տրված 19.03.2010թ.-ին 008-ի կողմից:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան